ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 10 – Ն «15» մայիս 2012թ.

ԴՈՆՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՅՈՒՆ ԿԱՄ ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-275-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել դոնորի կողմից արյուն կամ արյան բաղադրամաս հանձնելու հաճախականությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ի.Աբգարյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի
մայիսի 15-ի N 10-Ն հրամանի

ԴՈՆՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՅՈՒՆ ԿԱՄ ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴՈՆՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՅՈՒՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.Դոնորի կողմից արյուն (այսուհետ՝ ամբողջական արյուն) հանձնելու միջև ընկած դեպքերի ժամանակահատվածը սահմանվում է առնվազն 2 ամիս: Դոնորի կողմից ամբողջական արյուն հանձնելու առավելագույն թույլատրելի քանակը տղամարդկանց համար տարեկան հինգ, կանանց համար՝ չորս անգամ է:

2.Դոնորի կողմից ամբողջական արյուն հանձնելու երկու հաջորդական դեպքերի միջև ընկած ժամանակահատվածում դոնորի հեմոգլոբինի պարունակության իջեցումը չպետք է գերազանցի 20 գրամ/լիտր:

3.Ամբողջական արյուն հանձնելու և 1 միավոր էրիթրոցիտների հավաքման միջև ընկած ժամանակահատվածը սահմանվում է առնվազն 2 ամիս:

4.Ամբողջական արյուն հանձնելու և մեկ պլազմաֆերեզի միջև ընդմիջումը սահմանվում է առնվազն մեկ ամիս:

5.Ամբողջական արյուն հանձնելու և մեկ թրոմբոցիտաֆերեզի միջև ընդմիջումը սահմանվում է առնվազն մեկ ամիս:

2.ԴՈՆՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. Դոնորի կողմից որպես արյան բաղադրամասեր հանձվում են արյան պլազման և տրոմբոցիտները:

7.Դոնորի կողմից արյան պլազմայի միանվագ հանձնման դեպքում՝ առավելագույն ծավալը չի գերազանցում 750 միլիլիտր (ներառյալ՝ հակամակարդիչ լուծույթը), իսկ առավելագույն տարեկան ծավալը չպետք է գերազանցի 25 լիտր՝

ներառյալ հակամակարդիչ լուծույթը, իսկ տարեկան պլազմաֆերեզի թիվը չպետք է գերազանցի 33-ը:

8.Դոնորի կողմից պլազմայի հանձնման միջև ընկած ժամանակահատվածը սահմանվում է առնվազն 14 օր: Եթե պլազմաֆերեզի գործընթացի ընդմիջումը կազմում է 2 ամիս և ավելի, ապա դոնորը դիտվում է որպես առաջնակի:

9.Դոնորի կողմից տրոմբոցիտների հանձնման միջև ընկած ժամանակահատվածը սահմանվում է առնվազն 14 օր: Տարվա ընթացքում կարելի է տրոմբոցիտների հանձնումը իրականացվում է ոչ ավելի քան 24 անգամ:

10.Որոշ դեպքերում (ոսկրածուծի փոխպատվաստում, ռեցիպիենտի հազվադեպ խումբ, այլ դոնորներին անհամատեղելիության դեպքում կյանքի ցուցումով ռեցիպիենտին փոխներարկում) հիվանդի հարազատներից թույլատրվում է կատարել տրոմբոցիտաֆերեզ յուրաքանչյուր 3-րդ օրը: Այս դեպքերում յուրաքանչյուր անգամ հավաքված թրոմբոցիտար զանգվածի ծավալը չպետք է գերազանցի 150 միլիլիտր:

11.Երկշաբաթյա ընդմիջումով 15 անգամ տրոմբոցիտաֆերեզ իրականացնելուց հետո անհրաժեշտ է տալ 3 ամիս ընդմիջում: